

ԿՐՕՆԸ ԿԱՆ-ԲԸՐՈՅՈՒԿԱՆ

IV.

Աստծու արդարութիւնը:

Երբ հեռուից նայում ես թուխպի միջով, դժուար է լինում որոշել թէ ինչ է դիմացինդ, նոյն իսկ չես իմանում մարդ է թէ ծառ: Քիչ մօտենալով՝ տեսնում ես որ մարդ է. բայց թէ ո՞վ է, չես կարողանում ճանաչել: Այն ժամանակ ես միայն որոշ տեսնում նորա դէմքը, երբ բոլորովին մօտենում ես: Աստծու արդարութիւնը ճանաչելն այդպէս է լինում: Մեր ամենքի աչքի առաջ բռնել է առօրեայ կեանքի անարդարութեան թանձր մէդը. և՛ պէտք է որ երկար ու անթարթ նայենք, որ այդ թանձր մէդը թափանցելով՝ կարողանանք պարզ տեսնել Աստծու ճշմարտութիւնը: Միևնոյն Աստուածային ճշմարտութիւնը հեռուից և մօտիկից մեզ կերևայ զանազանակերպ: Փրկիչը պարզ և լրութեամբ էր տեսնում Աստծու արդարութիւնը և ցոյց տալիս մարդկանց մօտիկից: Իսկ դպիրներն ու փարիսեցիները հեռուից էին տեսնում այն և նրանց թւում էր թէ Քրիստոս Աստծու արդարութեան անունով բոլորովին այլ բան է քարոզում: Նորա մեղադրում էին Յիսուսին, որ Նա փոփոխում է Մովսիսական օրէնքը, և քանդում մարգարէների վարդապետութիւնը: Յիսուս նրանց պատասխանում է. «Մի կարծէք թէ եկել եմ քանդելու օրէնքները կամ՝ մարգարէները. քանդելու չեմ եկել, այլ լրացնելու»: (Մթ. ե. 17):

Ահագին տարածութեան վերայ ընկած են ոսկու հանքեր, շերտ-շերտ, իրար վերայ, և որքան խորն ես քանդում՝ այնքան մեծ չափով է ոսկին: Եթէ վերին շերտում 100 փութ աւազից դուրս է գալիս մէկ մսխալ ոսկի, երկրորդ շերտում կատացուի 2-3 մսխալ, երրորդում 10-ն

մոխալ, չորրորդում՝ ¹/₂ ֆնտ. և այդպէս՝ քանի խորն այն-
քան չափ: Եթէ հանքը շահագործում են կոպիտ կեր-
պով, բարձրարժանքաւոր, այդ դէպքում՝ սովորաբար՝ միայն
վերին շերտիցն են օգտւում, ապա՝ թողնում են ու մի
այլ տեղ գործում: Դպիրներն ու փարիսեցիներն էլ այդ-
պէս էին վարւում՝ մովսիսական օրէնքներով և մարգա-
րէնների վարդապետութեամբ տուած Աստուածային ար-
դարութեան հետ: Նոքա մակերևոյթօրէն միայն և հա-
րկանցի ըմբռնելով օրէնքը՝ կարծում էին թէ լրիւ գի-
տեն: Փրկիչն ասում էր, որ դա սխալ է, պէտք է խորը
թափանցել, անընդհատ դիտել Աստծու արդարութիւնը:
Երբ կէս գիշերին նայում ես աստղալից երկնքինը՝ աստ-
ղերը երևում են քիչ քանակութեամբ: Բայց նայիր
անթաւր, թափանցիր խորը և մօտիկ երեացող
աստղերից դէնը, աւելի հեռուն կտեսնես անթիւ անհա-
մար, թաղուած անսահմանութեան խորքում: Շարունա-
կիր դիտել, և աստղերի իրար հետևող հոյլերը կյոգնե-
ցնեն քո թոյլ տեսողութիւնդ, ամեն տեղ աստղերի ան-
համար խմբեր, ամեն կողմ՝ ճրագներ են վայլում՝ այդ
անսահմանութեան գրկում:

Աստծու արդարութեան հէնց այդպիսի ճրագներն է
կամենում ցոյց տալ Փրկիչը կարճատես մարդկանց: Նա
չէր եկել քանդելու, փոխելու Մովսիսի և մարգարէների
միջոցով յայտնուած ճշմարտութիւնը, այլ պարզելու, բա-
ցատրելու մարդկանց այդ արդարութիւնը իւր բոլոր վե-
հութեամբ, փայլով, և լրճութեամբ իրականացնելու,
կատարելու: Աստծու արդարութիւնը չի կարելի քանդել:
Յաւիտենական է այն: Երկինքը և երկիրը կանցնեն, իսկ
Աստծու արդարութիւնը կմնայ յաւիտեան, և «եթէ մէկը
«կլուծի այդ պատուէրներից մի բան և այնպէս կսովորե-
ցնէ մարդկանց, նա փոքր կկոչուի երկնքի արքայութեան
«մէջ: Իսկ ով, թէ կուզ մի բան այդ արդարութիւնից կկա-
«տարէ և այնպէս կսովորեցնէ մարդկանց, նա մեծ կկո-
չուի երկնքի արքայութեան մէջ»:

Սակայն ընդ միշտ բաւականանալ այդ քիչով՝ չի կա-

րելի: դպիրներն ու փարիսեցիները լայն ու խորը կերպով չէին ըմբռնում Աստծու արդարութիւնը, այլ խղճուկ, մակերևոյթօրէն. իսկ այդպիսի ըմբռնողութեան վերայ չէր կարելի հիմնել, կառուցանել մարդկանց մէջ Աստուածային կեանք: Ծշմարտութիւնն ըմբռնելու, հասկանալու համար՝ աւելի հեռուն էր հարկաւոր դնալ. «Եթէ ձեր «արդարութիւնն առաւել չի լինիլ քան դպիրներինն ու «փարիսեցիներինը՝ չէք մտնիլ երկնքի արքայութիւնը», ասում էր Փրկիչն իւր աշակերտներին: Թէ ինչպէս փարիսեցիները խորը չէին հասկանում Աստծու արդարութիւնը և՛ թէ ինչպէս պէտք է ըմբռնեն—հասկանան այն իւր աշակերտները՝ Յիսուս հետեւեալն է ասում.—

«Դուք լսել էք, որ առաջուայ մարդկանց ասումած է, մի սպանէք, ով որ սպանի՝ պարտաւոր կլինի դատաստանին» (Եւրից. Ի, 13). Իսկ ես ասում եմ ձեզ, «Ով որ «զուր տեղը բարկանայ եղբօր վերայ, պարտաւոր կլինի «ատենին. իսկ որ յիմար ասի, պարտաւոր կլինի գեհենի կրակին»:

Աստծու արդարութիւնը պատուիրում է.—Մի սպանիր, ով որ սպանի պարտաւոր կլինի դատաստանին: Հրէաների կարծիքով այդ պատուիրանը — պատգամը մերձաւորի անձնապաշտպանութեան համար է, նորա արտաքին, նիւթական ապահովութեան համար է. Եւրից գրքի ԽԱ. գլխում զարմանալի մանրամասնութեամբ նախատեսուած է մերձաւորի մարմնին վնաս բերելու ամեն տեսակի դէպքերը: Մերձաւորին սպանողը մահուան կդատապարտուի, ասումած է այնտեղ, բայց եթէ սպանութիւնը անգիտութեամբ է եղել, սպանողը կարող է ապաստանի քաղաքը փախչել, թագնուիլ, իսկ եթէ «սպանութիւնը նախամտածուած է, այդ դէպքում սպանողին պէտք կալանաւորել նոյն իսկ զոհ մատուցած միջոցին «էլ, եթէ մէկը վէճի կամ կռուի ժամանակ կծեծի միւսին ծանր կերպով, պարտաւոր է վճարել ծեծուածին «թէ բժշկուելու ծախքը և թէ գործից ընկնելու վնասը: «Եթէ կռուի մէջ խեղումներ կպատճառեն մէկին, մեղա-

«Լորին նոյնը պէտք է հատուցանել.— աչքի տեղ՝ աչքը, ատամի տեղ՝ ատամը, ձեռքի փոխարէն ձեռքը, ոտքին՝ ոտքը, այրուածին՝ այրուածք, վէրքին՝ վէրք, կոտրուածին՝ կոտրուածք: Եթէ մէկը ինքը չէ սպանել, այլ կողմէնակի կերպով պատճառ է մահուան, ինքն էլ է մահով պատժուում,— եթէ մէկն ունի հարու տուող եզն ու կապած չի պահիլ և նա կհարուած է կսպանէ մէկին, եզան տէրն էլ պէտք է մեռնի»: Այսպիսի մանրակ կիտ մանրամասնութեամբ է պատուիրուած հսկել մերձաւորի մարմնի պահպանութիւնը: Սակայն այդ չէ բոլորը: Չէ որ մարդը միմիայն մարմնից չէ կազմուած: Մարդուն կարելի է հարուածել և խօսքով, որ աւելի կցաւեցնի քան քարի, սրի, բռնցքի հարուածը: Մարմնի պաշտպանութիւնը— դա վերին շերտն է, պէտք է աւելի խորը գնալ, պաշտպանել մարդու բարոյական արժանապատուութիւնը, յարգել նորա անձնաւորութիւնը: Դորա համար է, որ Փրկիչն ասում է.— «Իսկ ես ասում եմ ձեզ, ով ի դուր տեղը ջրականայ եղբոր վերայ, պարտաւոր է դատաստանի, ով որ եղբորը կանուանէ մօրոս, պարտաւոր կլինի ատենին իսկ ով յիմար ասի եղբորը. պարտաւոր կլինի գնահենի կրակին»:

Այստեղ որոշուում է Աստծու արդարութեան դէմ գործուած յանցանքի երեք տեսակը և նոցա դիմաց դրուում է երեք տեսակի պատիժ.— առաջինը՝ փոքր, երրորդը մեծ, իսկ երրորդն՝ ամենախիստը: Մերձաւորի անձնաւորութեան դէմ գործած յանցանքի առաջին աստիճանը՝ մարդուն ի դուր, անտեղի կերպով ստորացնելն արհամարհելն է, թէկուզ միմիայն իւր մտքում: Եթէ ես առանց օրէէ հիմքի միւսին ինձնից ստոր եմ համարում, բարկանում նորա վերայ ի դուր տեղը, մտքումս նորան դատապարտում, այդ բանի համար ինքս եմ ենթակայ դատաստանի, ինքս եմ ինձ դատապարտում: Ով ուրիշի անձնաւորութիւնն ստորացնում է թէկուզ դադոնապէս, նա իրան է ստորացնում:

«Ով որ եղբորը կանուանէ մօրոս, պարտաւոր է

ատենին այսինքն, հասարակաց դատաստանին է ենթակայ, Մոռոս բառն ասորերէն է։ Յովհան Ոսկերեւրանը, որ ազգով ասորի է, ասում է, որ՝ «մոռոս անուանելը մի մեծ անպատուութիւն չէ. այդ բառով մէկը միւսին թեթեակի արհամարհանք է արտայայտում, մարդատեղ չէ դնում»։ Մեղանում այժմ գործադրում են այդ մտքով այդ դեպքում, ագա բառերը, որ նոյն նշանակութիւնն ունի։ Ստացւում է այսպիսի մի միտք, որ դու ստորացրիր մէկին միայն քո առաջ, որով ինքդ քեզ ստորացրիր ու դատապարտեցիր. և եթէ քո այդ արհամարհանքը դէպի քո եղբայրդ արտայայտես հրապարակաւ նորան անուանելով էյ մոռոս, և դրանով քեզ ստորացնես հրապարակաւ, պարտաւոր կլինես ատենին—հասարակաց դատաստանին։

«Իսկ ով որ եղբօրը յիմար կանուանէ, պարտաւոր է գեհնի կրակին», Գեհէն կոչւում էր Երուսաղէմի շուրջն կած հովիտներից մէկը, ուր հին ժամանակներն, անօրէն թագաւորների օրօք, հրէաներն իրանց երեխաներին կենդանի զոհ էին բերում։ Մոզք աստծու կուռքին։ Յետոյ մոռացուեց այդ կուռքը, սակայն այն զարհուրելի յիշատակը մնաց կապուած Գեհէն—հովտի անուան հետ։ Այդ հովիտը դարձաւ աղբանոց, ուր բերում թափում էին քաղաքի անմաքրութիւնները, և որպէս զի փթումից վարակ չառաջանայ՝ անշէջ կրակ էին պահում այնտեղ—չարունակ այրում թափած կեղտերը։ Այդ ժամանակուանից սկսած այն հովիտը կոչւում է հսւր-գեհէն։ Եւ ուրեմն՝ աւետարանի խօսքերն այսպէս պէտք է հասկանալ. — «Եթէ մէկը իւր մերձաւորին ոչ միայն իրանից, այլ և բոլոր մարդկանցից ստոր է համարում և նորան անուանում յիմար, ուրեմն նորան հաւասարեցնում է անբան անասուններին, այդպիսի վարմունքով հէնց իրան է ստոր դարձնում բոլոր մարդկանցից, հետեապէս համարւում է մարդկանց աւելցուի, հաւասար բարոյական աղբի, և ուրեմն նրա տեղը Գեհէն—հսւրն է»։ Պարզ է ուրեմն, որ Փրկիչը բացադրելով «մի սպանաներ» պատուիրանը՝ պահանջում է պաշտպանել ոչ միայն մարդու

մարմնի գոյութիւնը—անվնասութիւնը, այլ աւելին,—յարգել, պաշտպանել մարդու բարոյական անձնաւորութիւնը, արժանապատուութիւնը: Մարդը մարդու համար պէտք է համարուի սրբութիւն: Մարդն Աստծու կենդանի տաճարն է (Կորնթ. Գ. 16), մարդն Աստծու կենդանի պատկերն է (Ծննդ. Ա. 26):

Երբ մենք շրջում ենք թագաւորական պալատում և դիտում գեղարուեստի արտադրած գանձերն, որքան զգոյշ, սրպէս հոգատար ենք, որ մի գուցէ մի բան վեր գցենք կամ փնասենք, Սակայն շրջելով մարդկանց մէջ՝ գործ ենք դնում մեր բռնւնցքն ու թևերը. հրհրում, ով մեր առաջ, մեր ճանապարհին է, կնշանակէ չենք հասկանում Աստծու արդարութիւնը: Գիտենք բառերն, առանց գրքի ենք կրկնում ուրիշներին, բայց չենք ըմբռնում այդ խօսքերի իմաստը լրութեամբ: Թանձր մէգը փակել է մեր աչքերի առաջը. մենք չատ ենք հեռացել ճշմարտութիւնից, սրի դիմագծերն անգամ անկարող ենք որոշել: Պէտք է ազատուել այդ խաւար ծածկութից և մօտենալ Աստծու արդարութեանը:

V.

Առաջին քայլերը:

Մի մեծ յարկի տակ երկար ժամանակ խմբուած էին բազմաթիւ մարդիկ. Շնչառութիւնից և գոլորշիացումներից կեղտոտուել, ծանրացել էր օդը. խեղդուկ է, շնչելը դժուար: Եթէ այդպէս երկար շարունակուի խեղդուել կարելի է. Անհրաժեշտ է բացել դուռն ու լուսամուտները, ներս թողնել թարմ օդ: Սակայն այդ անելու համար նախ պէտք է զգալ, իմանալ, որ օդը փչացած է:

Մտէք գիշեր ժամանակ ընդհանուր ննջարանները, բանտերը կամ ապաստանարաններն, ուր բազմաթիւ մարդիկ են գիշերում. մտէք ձմեռ ժամանակ դիւղական խրճիթներն, ուր միասին խմբուած են մարդիկ և անասուններ, և կտեսնէք, որ դրսից—թարմ օդից եկողն ան-

կարող է դիմանալ, չնչել: Սակայն այնտեղ եղողները նոյն իսկ գոհ են, «այսպէս լաւ է, տաք է», կասեն նոքա: Մարդկային սերունդներն էլ իրար յաջորդելով ծովի ալիքների նման՝ իրանց հոգու խորքից վեր են հանել ամեն տեսակ պղտորութիւն, անմաքրութիւն և շարտել կեանքի մէջ. և դիզուել, բարձրացել են չարիքի լեռներ, ու կեանքն այնպէս են ապականել չարիքներով, անարդարութեամբ, որ երբեմն ուղղակի խեղդում է մարդ: Թարմ-մաքուր օդը չի կարողանում չնչել-տանել կեանքի այդ գարշաւ հոտութիւնը: Սակայն մարդկանց մեծամասնութիւնն ընտելացել է դրան, վարժուել այդ վատ օդին, բաւական են իրանց դրութեամբ և հաճելի է նրանց այդ կեանքը:

Նախ և առաջ հարկաւոր է սթափուել, զդալ, ուշքի գալ, հասկանալ, որ չի կարելի ապրել այդպիսի խեղդուկ օդի մէջ, որ մարդուն անհրաժեշտ է թարմ օդ: Իսկ այդպիսի օդ չունենք մենք, աղքատացել ենք, չքաւորուել, հէնց այդ տեղից էլ սկսում է Փրկիչը, Առաջին խօսքը որ Նա ասաց ժողովրդին լերան քարոզի մէջ, մարդկանց հոգով աղքատանալու մասին էր. — «Երանի հոգով աղքատներին, որովհետեւ նրանցն է երկնքի արքայութիւնը»: (Մթ. Ե. 3):

Մարդիկ որոնում են բազդ, ցանկանում են ապրել արդարութեամբ, կամենում են հիմնել երկրի վերայ Աստծու արքայութիւնը: Սակայն այդ բանի համար ունեն բաւականաչափ արիութիւն: Լերկ քարի վերայ ծաղիկ չի բուսնիլ, ոչ էլ դատարկ ամանից խմել կլինի. և ո՞ր արհեստաւորը կարող է ցեխից պալատ կանգնեցնել. — Ամեն գործի հարկաւոր է յարմարաւոր նիւթ: Արդեօք մենք ունենք բաւականաչափ բարիք կամ բարի կեանք: Մեր բնաւորութիւնը — կամքը ամուր և հաստատուն են, և պիտանի արդեօք մարդկանց մէջ Աստծու արքայութիւն հիմնելու գործին: Ծանկայ, որ աճել մեծացել է, մի քանի գիրկ հաստութիւն ունի և հպարտութեամբ աղմուկում է կանաչ սաղարթով-ճղներով. բայց երբ մօտենում ես՝ ծառի ներսն ամբողջովին փտած-թափած է,

նա փչակ է, ոչ մի բանի պէտք չի գալ նորա փայտը, եւ ահա այդպիսի ծառերի մի ողջ անտառ է կանգնած. ծառեր շատ կան, բայց շինութեան համար անպէտք են և գործն առաջ չէ գնում:

Մեզ էլ պէտք է գնահատենք, ստուգենք մեր դրամագլուխը, որով մենք գործում ենք կեանքի մէջ: Մարդկանց մէջ Աստծու արքայութիւնը կանգնեցնելու համար՝ արդեօք բաւական են մեր ունեցած միջոցները: Այդպիսի մի ստուգումը — հաշուետեսութիւնը ցոյց կտայ մեզ, որ մեզանում շատ կայ ամբարտաւանութիւն և սնապարծութիւն, իսկ մեր իսկական արժէքը մեծ չէ, շատ անգամ հազիւ մի անպէտք գրօշ արժեքներ, Խօսքով դերաններ ենք փչրում, բայց գործից խոյս ենք տալիս, մատ անգամ չենք շարժում: Եւ բանից դուրս է գալիս, որ մենք բարեք գործելում ոգով թոյլ ենք, անուժ, կարծես կաթուածահար լինենք: Մենք մեզ հսկաներ ենք համարում, սակայն աւելի վատ ենք քան անդամալոյծը, որ ամբողջ Յէ տարի անշարժ ընկած էր անկողնում: Պատահում է որ մեր ամբողջ կեանքում մատ անգամ չենք շարժում Աստծու գործի համար:

Սակայն հիւանդութիւնը, թուլութիւնը մարդու համար դեռ կէս դժբաղդութիւն է. եթէ մարդ սկսի բժշկուիլ, կանոնաւոր կեանք վարել, կարող է յետ բերել առողջութիւն: Կատարեալ դժբաղդութիւնն այն է, որ մարդ իրան համարում է առողջ և խօսք անգամ չի ուզում լսել բժշկուելու վերաբերմամբ, չի փոխում իւր ապրելու եղանակը: Այդ դէպքում արդէն ոչ մի կերպ չի կարելի օգնել նորան: Մարդը գնում է ճահճուտով, քանի առանջ է գնում, այնքան աւելի և աւելի է խլում, ու կարծում է թէ դա է ամենաուղիղ ճանապարհը: Ի հարկէ վաղ թէ ուշ նա կանհետանայ այդ տղմի մէջ: Եթէ ոչ իսպառ ազատուած, գոնէ փրկութեան սկիզբը դրած կլինէր նա, եթէ հէնց սկզբում կանգ առնէր միայն, հասկանար, որ ախր չգիտէ իսկական ճանապարհը և մինչև այն գնում էր որպէս կոյրը: Եթէ հիւանդը

հասկանայ որ ինքը հիւանդ է իսկապէս, շատ հաւանա-
կան է, որ նա սկսի բժշկուել: Դորա համար է առւած,—
«Երանի՛, ով ժամանակին կհասկանայ որ աղքատ է հո-
գով, չքաւորել են բարութեամբ և արդարութեամբ. նոքա
կարող են գտնել Երկնքի Արքայութիւնը:

Ձէ առւած խեղճ, այլ—աղքատ, խեղճ և աղքատ
բոլորովին տարբեր հասկացողութիւններ են: Խեղճը,
թշուառը կարող է ոչինչ չունենալ, սակայն բաւական լի-
նել իւր վիճակով: Հնումը կար մի խեղճ իմաստուն, որն
ապրում էր տակառի մէջ: Երբ նորան այցելեց թագա-
ւորը և հարցրեց թէ ինչ կը կամենայ. նա պատասխա-
նեց. — «Դէն կաց, արևի առաջը մի փակիր»: Նա բաւա-
կան էր իւր դրութեամբ և ոչ ոքից ոչինչ չէր խնդրում:
Այլ է աղքատը. նա մուրացիկ է, շրջում է գիւղեր—քա-
ղաքներ, դռներ է ծեծում, ձեռք մեկնում անցկացողին,
ողորմութիւն խնդրում: Եթէ հոգով աղքատներն էլ
ամեն տեղ կորսնեն, ամենքից կխնդրեն օղորմութիւն
անել, ցոյց տալ իրանց բարին և արդարը՝ նոցա հոգին
գատարկ չի մնալ և կը գտնեն հարկաւոր նիւթերը կա-
ռուցանելու Աստծու արքայութիւնը իրանց և այլոց մէջ:
Կեանքի ամենամեծ դժբաղդութիւնն այն է, որ մարդիկ
չարիք են գործում, որ կեանքը լի է անարդարութեամբ:
Ձարհուրելի է այն բութ անտարբերութիւնը, որ ունեն
մարդիկ դէպի բարին, դէպ արդարութիւնը. մարդիկ բա-
ւական են իրանցով, հալարտ իրանց այդ կեանքով, դար-
հուրելի է: Մարդիկ ընտելացել են բարոյական գարշա-
հատութեան և հանգիստ ապրում են այդ տալանաւո-
թեան մէջ: Եւ բաղդաւոր է նա, ում անտանելի կթուան
կեանքի այդպիսի պայմանները, ով կզգայ, որ շնչելու օդ
չկայ. և այդպիսին այլ ես չի մնալ այդ գարշահատութեան
մէջ, նա կձգտէ դէպ Աստուածաշունչ ազատութիւնը:
Ուրեմն՝ հասկանալ կեանքի չքաւորութիւնը, գիտակցել
իւր հոգու աղքատութիւնը՝ դա մեծ բան է: Յետ դառ-
նալու սկիզբն է դա, նոր—լուսաւոր կեանքի առաջին
քայլն է դա:

Երկրորդ քայլն է—զգալ, ցաւել, դառը կերպով լաց լինել հոգու աղքատութիւնը, բարոյական չքաւորութիւնը։ Մեր մեծամասնութեան կեանքը հէնց այն պատճառաւ է ծանր, որ մենք շատ թեթեւ ենք վերաբերում մեր ներքին սնանկութեանը։ Մենք վշտանում ենք, այլուում՝ մահու չափ դառնանում, լաց ենք լինում, եթէ կորցնում ենք մեր կարողութիւնը, կամ պաշտօնը, կամ մարմնի առողջութիւնը, կամ մեզ մօտիկ-թանկագին անձերից մէկին։ Բայց եթէ մեր տարիքի աւելանալով հետզհետէ պակասում, կորչում է մեր հոգու մանկական անոխակաւութիւնը։ Հոգու մաքրութիւնը, եթէ քայքայւում-բթանում է մեր խիղճը, զրկւում ենք մեր ամենալաւ զգացմունքներից, յոյզերից ու ձգտումներից, դա ոչինչ։ այդպիսի կորուստներին մեծ մասամբ թեթեւ օրտով ենք վերաբերում, ասես թէ մենք հրաժեշտ ենք տալիս ոչ թէ որպէս մեր սրտին մօտիկ, թանկագին բանի, այլ որպէս մի օտար կողմնակի ինչ լինին նոքա։

Մոսկվայում, Տրետեակովսկայա կոչուած սրահում կայ մի հետաքրքրական պատկեր։—Մի ընդարձակ դաշտ, ուր խոտերի մէջ ընկած են մարդկային դիակների անվերջ շարքեր, որ յաղթանակող թշնամին նողկալի կերպով պղծել է։ Դիակներից կան՝ որոնց դուխը չկայ, որոնց քիթը կամ շրթունքներն են կտրուած, կամ ականջները. կան, որ բոլորովին մերկ են, կան և որոնց մարմնի կաշին է ծուրկ-ծուրկ յօշոտուած։

Դիակներով փռուած այդ դաշտն ամեն անգամ յիշեցնում է ինձ մեզնից շատերի կեանքը։ Որքան խորն ես նայում գէպի յետ, դէպ պատանեկութիւնը, այնքան շատ ես տեսնում կորած երազանքներ, գեղեցիկ ձգտումներ։ Կեանքն իւր կոպիտ ու դաժան ձեռքերով որպէս այլանդակել, սրբապղծել է այդ ամենը։

Կար ժամանակ, որ այդ ամենը կենդանի էին, լուսաւոր ու մաքուր բաղդաւորութիւն էին խոստանում, և սակայն՝ այսօր կորած են այդ ամենը։ Երբ մտաբերում է մարդ այդ բոլորը, թուի թէ կանգնած է գերեզմանա-

տանը, որտեղ՝ ճւղ էլ նայես՝ խաչեր, գերեզմաններ են և նոցանից իւրաքանչիւրի տակ թաղուած՝

«սուրբ մտածմունքներ, պայծառ երազանքներ»:

Եւ բաղդաւոր է նա, ով գիտելով լուսաւոր երազանքների, կորած, խեղդուած բարի զգացմունքների այդ թանկագին գերեզմանները՝ կնայի նոցա արտասուող աչքերով, Կնշանակէ որ նորա մէջ դեռ մեռած չէ ամեն ինչ: Իւր վերայ խղճահարուելու դառն արտասուքները, իւր հոգու աղքատութեան վերայ դառնանալը կլուսանն նորա սրտի վերայից այն ցեխը, որ կեանքն է շարտել, ու կիափկացնէ, կշերմացնէ այդ սառած սիրտը: Կափոտայ նա իւր բարի անցեալը, կձգտի գէպ վաղճւց մոռացուած արդարութիւնը, և կարճ է լինել, որ նա երես դարձնելով իւր մանրիկ, մարդկային գործերից՝ կդառնայ դէպ Աստուածայինը, և այնտեղ կգտնի հոգու հանգստութիւն և բարձր սիրտիանք: Դորա համար է, որ Փրկիչն ասում է, «Երանի սգաւորներին, որ ովհետեւ նոքա կմխիթարուին»:

VI.

Երանի հեգիւրին:

Եթէ մարդիկ աղքատ են հոգով, եթէ նոցա կեանքն արտասուելի է, եթէ նոքա անանկացած են և անկարող Վերին Արդարութեան դատաստանի առաջ դուրս գալու, չեն պահում նորա-այդ Արդարութեան պատուէրները-պահանջները, այդպիսիները կարճ են խիստ ու պահանջող լինել գէպ ուրիշները: Մենք լինելով կարօտ կարեկցութեան և ցաւակցութեան, պէտք է ներողամիտ ու հեղ վերաբերուենք մեր եղբօրը: Որպէս պատերազմի դաշտում, մենք ամենքս վիրաւորուած-բզկտուած ենք ու տանջուած կեանքից, հոգով ենք տառապած: Պէտք է որ գէպ իրար ունենանք հոգատար, հեղ ու սիրալիր վերաբերմունք: Որպէս ճանապարհին ընկած վիրաւորներ, ամենքս էլ կարօտ ենք ողորմած Սամարացու: Եւ Աւետա-

բանը մեզ աւանդում է այդպիսի վերաբերմունք դէպ իրար. «եղէք հեզ, ասում է, երանի հեզերին, որովհետեւ նորա կժառանգեն երկիրը»:

Սակայն լինել հեզ՝ չի նշանակում, որ խեղճանանք, ձեռքներս վար թողնենք, խոնարհութեամբ հնազանդուենք չարին, կատարելապէս անձնատուր լինենք նորա կամքին: Ո՛չ, հեղութիւնը մի բարձր հերոսութիւն է, ուժ, որն ընդունակ է ոչ միայն թշնամուն յաղթելու, այլև նորան բարոյապէս վերածնելու, փոխելու և բարեկամ դարձնելու, — ուժ, որ կարող է չարը դարձնել բարի:

Ս. Մակար եգիպտացու կենսագրութեան մէջ պատմած է, թէ ինչպէս նա միանգամ իւր երիտասարդ աշակերտի հետ վերադառնում էր անապատ. ծանապարհը գնում էր լեռն ի վեր: Պատանի աշակերտը յառաջել էր ծերունի ուսուցչից. յանկարծ ճանապարհի դարձուածքին նորա գէմն ելաւ կռապաշտական մի քուրմ: — Մի կողմ անցիր, սատանի ծառայ, դուռաց նորա վերայ տաքարին պատանին:

Քուրմը զայրացած՝ ձեռքի մահակը բոլոր ուժով վրայ բերեց թշնամանող երիտասարդի գլխին: Պատանին ընկաւ անզգայ. ծանապարհի միւս դարձուածքին պտտահեց Ս. Մակարին, որն առանց սպասելու քուրմի ողջունին, ասաց. — Աստուած օգնական, թանկագին եղբայր, մաղթում եմ քեզ յաջող ճանապարհ: Քուրմն զգածուեց ու զարմացաւ այդպիսի ողջունի վերայ. նա շատ լաւ դիտէր, որ ս. Մակարը քրիստոնեայ է:

— Չէ որ ես կռապաշտ եմ, ասաց նա. ինչպէս է, որ ինձ եղբայր ես կոչում: Եւ բացի այդ՝ հէնց նոր էր, որ փայտիս հարուածով սպանեցի քո աշակերտին: Հիմայ էլ բարի ճանապարհ կմաղթես ինձ:

— Հիմայ առաւել ևս մաղթում եմ քեզ բարի ճանապարհ, որովհետեւ դու գնում ես վատ ճանապարհով: Իսկ եթէ քեզ եղբայր եմ անուանում, դուրս պատճառն այն է, որ ամենքիս Հայրը մէկ է — Աստուած. իսկ մենք բոլորս նորա օրդիններն ենք, ուրեմն եղբայրներ ենք:

Մերունսու խօսքերը գերիցին բուրմին: Եւ նա երկար զրոյցի բռնուեց ա. Մակարի հետ, ու վերջն էլ մկրտուեց: Աշխարհում մարդիկ գործում են կոպտութեամբ, գաղան-
օրէն: Նորա չգիտեն գործադրել սուրիշների վերայ այլ ուժ.
— ուժ, որ վերին է, ուժ՝ բարութեան և սիրոյ, ուժ՝ հեզ
փաղաքշանքի և հսկող հոգատարութեան: Պէտք է ցոյց
տալ մարդկանց այդ ուժը. և այդ նպատակաւ էլ ուղար-
կում է աշխարհ իւր աշակերտներին՝ ասելով:—

— Ձեզ ուղարկում եմ, որպէս ոչխարը գայլերի մէջ:
Եղէք խորագէտ որպէս գձը, և միամիտ, որպէս աղաւնի:
(Մտթ. Ժ. 16):

Լինել օձի նման խորագէտ, նշանակում է թա-
փանցել ուսումնասիրել կեանքի բոլոր երևոյթները, կող-
մերը. ամենաչնչինն, ամենափոքրն անգամ՝ անուշադիր
չը թողնել:

Լինել միամիտ որպէս աղաւնի, կնշանակէ, որ
կեանքի բոլոր երևոյթներին իրանց չար, անարդար և ա-
նօրէն կողմերով, ամենուրեք և ամեն բանում՝ Յիսուսի
աշակերտը պէտք է վերաբերուի միակերպ հեզութեամբ.
և պարտաւոր է ամեն տեղ գործել սիրոյ հեզութեամբ:
Փրկիչը պարզ ու որոշ կերպով և ընդմիշտ ասում էր իւր
բոլոր աշակերտներին՝ «Սովորեցէք Ինձանից, որովհետեւ
ես հեզ եմ և սրտով խոնարհ» (Մտթ. ԺԱ. 29):

Չպէտք է վախենալ այն մտքից թէ՛ ըստ աւետարա-
նի՝ անպայման կատարեալ հեզութեան դէպքում կա-
րող է չարը զօրել, յաղթել ու ոչնչացնել արդարութիւնը,
սէրն ու բարին: Մարդու հոգու մէջ կան բարի և չար
զգացմանց սաղմեր: Մարդկային կեանքն այնպէս է կազ-
մակերպուած, որ սրտի մէջ չարն ունի լայն ասպարէզ,
կատարեալ ազատութիւն. իսկ բարին զարգանալու դէմ
կան արգելք, խտրողութիւններ, բարու սերմերը խեղդւում
են, չեն ծլում-ծաղկում: Պէտք է զարթեցնել մարդկանց
մէջ այդ խլացած-քնած բարին: Պէտք է այնպէս անել,
որ մարդու մէջ եղած այն ամենը որ բարի է, սուրբ է,
և մնացել է խլացած-անշարժ, կենդանացնել-ջերմացնել

սիրով, ցօղել Աստուածային արդարութեան կենդանի ջրով
և շրջապատել ամենաքնքոյշ և հոգատար խնամքով:

Բնակարանների մեծ սենեակներում շարում են կեն-
դանի ծաղիկներ-բոյսեր: Միայն զարդարելու համար
չէ դա: Կենդանի բոյսերը տալիս են էական օգուտ—մաք-
րում են օդը: Շնչառութեան ժամանակ մարդիկ ներ-
շնչում, սպառում են թթուածինը և արտաշնչում ած-
խածին, որը թունաւորում, ապականում է օդը: Ածխա-
ծինը խեղդող, սպանող է: Ահա հէնց այդ է կենդանի բոյ-
սերի տուած օգուտը, որ ծծում—կլանում են ածխածինը
և փոխարէնը տալիս—արտաշնչում են մաքուր թթուածին:
Կեանքի մէջ էլ անհրաժեշտ է նման գործողութիւն, այդ-
պիսի աշխատանք: Կան մարդիկ, որոնք արտաշնչում են
չարիք և անարդարութիւն, թունաւորում են կեանքը
բարոյական ածխածինով: Դորան հակառակ՝ միւս
մարդիկ էլ, կենդանի բոյսերի պէս՝ պէտք է մաքրեն օդը,
արտադրեն բարոյական թթուածին: Գաղանների
ռնոցին և գայլերի առամանց կրճտոցին պէտք է պա-
տասխանել խաղաղութեան, սիրոյ և հաշտութեան հեղ-
եւրդով: Եւ այդ երգը կկապեն մարդկանց միջի շարիքն
ու թշնամանքը, կզարթեցնէ նոցա մէջ ամենապայծառ
զգացմունքներ և ամենքին կընտելացնէ, կսովորեցնէ աւե-
տարանական հզօր կոչը՝ դէպ Աստծու Արքայութիւնը:

Հէնց դորա համար էլ Փրկիչն ասում է՝ «Երանի հե-
ղերին, որովհետեւ նոքա կժառանգեն երկիրը»:

Փոխադրեց Մ. Բ. Տէր Մկրտչեան

